

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ԱԼԵԿՈԾ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՆ
ՅՈՅՍԻ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՓՆՏՈՏՈՒՔ**

Աստուածային տնօրինութեամբ, հաւատացեալ մարդկութիւնը եւ մասնաւորաբար հայ ժողովուրդը դարձեալ մուտք կը գործեն հոգեւոր այն խորհրդաւոր ու սրբազան ժամանակահատուածը, որ մեզ Մեծ Պահքի ինքնաքննութեան ճամբով կ'առաջնորդէ դէպի Սուրբ Յարութեան լուսաշող առաւօտը: «Սիրոն»ի այս էջերէն, որոնք կը շնչեն Երուսաղէմի սրբազան աւանդութեամբ եւ հոգեւոր անխաթար ժառանգութեամբ, հարկ է կանգ առնել եւ վերարժեւորել այս ուղեւորութեան կենսական նշանակութիւնը՝ մասնաւոր ներկայիս աշխարհը փոթորկող քաղաքական եւ ընկերային տագնապներու լոյսին տակ:

Մեծ Պահքը պարզապէս կերակուրներէ հրաժարելու ծիսական կամ մարմնաւոր արարողակարգ մը չէ, այլեւ՝ ազգային, հաւաքական եւ անհատական ապաշխարութեան, մտքի սթափեցման ու հոգիի մաքրագործման խորասուզում: Բանասիրական եւ հոգեւոր ընկալումով՝ «պահք» արմատը սերտօրէն կ'աղերսուի «պահպանութիւն» եւ «զգուշութիւն» հասկացութիւններուն հետ: Անիկա կոչ է՝ պահպանելու մեր հոգեւոր ինքնութիւնը, զգուշանալու աշխարհիկ ունայնութիւններէն եւ վերականգնելու Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը մեր մէջ: Եթէ նախամարդը դրախտին մէջ խախտեց պահքի աստուածադիր պատուիրանը եւ ճաշակեց անկումի դառնութիւնը, ապա Քրիստոս անապատին մէջ իր քառասնօրեայ ծոմապահութեամբ վերահաստատեց հոգիի գերիշխանութիւնը մարմնին վրայ՝ մեզի աւանդելով փորձութիւնները յաղթահարելու կենսակերպ մը:

Այսօր, երբ կը դիտարկենք մարդկութեան եւ յատկապէս մեր ազգին շուրջ ստեղծուած աշխարհաքաղաքական բարդ ու տագնապալի իրավիճակները, Մեծ Պահքի եւ ապա Սուրբ Յարութեան խորհուրդը կը ստանան գոյութենական հնչեղութիւն: Աշխարհը կը տագնապի պատերազմներով, մարդկային ողբերգութիւններով, բռնի տեղահանութիւններով եւ արդարութեան ոտնահարումով: Հզօրները կը փորձեն վերաձեւել քարտէզները՝ յաճախ անտեսելով փոքր ու խաղաղասէր ժողովուրդներու ապրելու եւ արարելու բնական ու աստուածատուր իրաւունքը:

Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին բազմիցս քալած է ազգային Գողգոթայի ճամբով: Մենք մեր մորթին վրայ զգացած ենք անարդարութեան խարազանն ու խաչելութեան ցաւը: Սակայն մեր պատմութիւնը, ճիշդ ինչպէս Աւետարանը, չի կրնար լի ուրբաթօրեայ խաւարով: Աշխարհաքաղաքական ամենէն մռայլ հանգրուաններուն անգամ, երբ թուած է, թէ վերջնականապէս զլորուած է հայոց կեանքի գերեզմանին քարը, մեր ժողովուրդը իր հոգեւոր արթնութեամբ ու մշակութային-ստեղծագործական հանճարով գտած է Յարութեան ճամբան:

Ներկայ խռովայոյզ ժամանակները մեզմէ կը պահանջեն ոչ միայն դիւանագիտական կամ քաղաքական զգօնութիւն, այլեւ՝ հոգեւոր հզօրացում: Առանց հոգեւոր ամ-

րութեան եւ ինքնաճանաչողութեան, որեւէ աշխարհիկ ռազմավարութիւն դատապարտուած է սնանկութեան: Մեծ Պահքը լաւագոյն առիթն է ազգովին վերագտնելու մեր բարոյական առանցքը, համախմբուելու մեր քրիստոնէական արժէքներուն շուրջ եւ մերժելու պառակտումի ու յուսահատութեան ոգին:

Սիոն լեռէն՝ Երուսաղէմի սրբազան բարձունքէն, ուր Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը դարեր շարունակ անխոնջ կը հսկէ Տնօրինական Սրբավայրերը, Յարութեան պատգամը կը հնչէ առաւել շօշափելի ու հարազատ: Երբ կը մօտենանք Սուրբ Յարութեան Տաճարին եւ կը խոնարհինք Քրիստոսի թափուր Գերեզմանին առջեւ, կը վերահաստատենք այն անհերքելի ճշմարտութիւնը, թէ մահն ու կործանումը չունին վերջին խօսքը:

Յարութիւնը վերականգնում է. անիկա ոչ միայն ֆիզիքական մահուան պարտութիւնն է, այլեւ ճշմարտութեան յաղթանակը՝ սուտի նկատմամբ, արդարութեան յաղթանակը՝ բռնութեան նկատմամբ:

Յարութիւնը յոյս է. անիկա այն անմար կանթեղն է, որ պէտք է լուսաւորէ մեր ընտանիքները, մեր կրթական ու մշակութային օճախները, մեր ազգային հաստատութիւններն ու հայրենիքը:

Յարութիւնը յանձնառութիւն է. որպէս յարութեան զաւակներ, մենք կոչուած ենք ըլլալու լոյսի եւ կեանքի դեսպաններ՝ քայքայուող ու սպառնալիքներով լեցուն այս աշխարհին մէջ:

Գրական ու բանասիրական մեր հարուստ ժառանգութիւնը վկայարանն է այս կենսափիլիսոփայութեան: Մեր շարականագիրները, Նարեկացին ու Շնորհալին, լեզուական աննման հիւսուածքներով մարմին տուած են այս հաւատքին՝ վերածելով զայն անմահ գրականութեան եւ հայ ժողովուրդի գոյատեւման բանալին: Երբ բառը կը միանայ հոգիին, ան կը դառնայ զէնք, վահան եւ յաղթանակի դրօշակ:

Ուստի, Մեծ Պահքի ապաշխարութեան արցունքներէն մաքրագործուած՝ ընդառաջ երթանք Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան: Թող Տիրոջ Գերեզմանէն ճառագայթող լոյսը ցրէ մեր անհատական հոգիներուն եւ մեր ազգի երկինքին վրայ կուտակուած աշխարհաքաղաքական թանձր ամպերը: Եւ Սիոնի բարձունքէն հնչող բարի աւետիսը թող զօրացնէ մեզ բոլորս, որպէսզի հաստատակամօրէն, հոգիի եւ մտքի կատարեալ արթնութեամբ, դիմագրաւենք ժամանակի մարտահրաւէրները եւ շարունակենք մեր ստեղծագործ ու անկասելի երթը դէպի յաւերժութիւն:

**Քրիստոս Յարեալ ի Մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի**